ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2025 թ.փետրվարի 4-ի հարցման կարգով թիվ 5 նիստի

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ հարցման կարգով նիստ, որի ընթացքում քվեարկության դրվեցին Մոլոյեան լրագրողական նախաձեռնության (ԱՄՆ) առաջարկով «Գաբրիել Մոլոյեան» անվանական կրթաթոշակի (50.000 ՀՀ դրամ) և անվանական կրթաթոշակի հավակնորդների թեկնածությունների հաստատման հարցերը:

Առցանց հարցմանը մասնակցած գիտխորհրդի 19 անդամները երկու հարցերին էլ քվեարկեցին «կողմ»:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ.</u>- ա/ Հաստատել Մոլոյեան լրագրողական նախաձեռնության (ԱՄՆ) առաջարկով «Գաբրիել Մոլոյեան» անվանական կրթաթոշակը (50.000 ՀՀ դրամ) և դիմել ռեկտորին ԵՊՀ Գիտական խորհրդի օրակարգում կրթաթոշակի հաստատման հարցը ներառելու խնդրանքով:

բ/ Երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Մանե Տիգրանի Հայրապետյանին 2025 թ. մարտի 1-ից ստանալու «Հարություն քահանա Շմավոնյան» կրթաթոշակը, բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Լիանա Գալուստի Քարամյանին՝ 2025 թ. մարտի 1-ից ստանալու «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակը, բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Հովհաննեսի Ասոյանին 2025 թ. մարտի 1-ից ստանալու «Հովհաննես Ադամյան» կրթաթոշակը, իսկ բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Երջանիկ Մայիսի Հարությունյանին 2025 թ. մարտի 1-ից ստանալու «Գաբրիել Մոլոյեան» կրթաթոշակը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ե. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ